

Պարո՛ն նախագահ,

Ինձ համար շատ հաճելի է Հայաստանում առաջին անգամ գտնվելը՝ մի երկրում, որը մեծ ավանդ ունի Եվրոպայի պատմության ու եվրոպական մշակույթի կերտման գործում, և որի հետ շատ ընդհանրություններ ունենք՝ կիսել ենք համատեղ անցյալն ու հույս ունեմ, կիսելու ենք նաև ապագան Շնորհակալ եմ ինձ և իմ պատվիրակության անդամներին ջերմ և անկեղծ հյուրընկալելու համար:

Սա մեր երրորդ հանդիպումն է: Նախկինում հանդիպել ենք Վարշավայում՝ Արևելյան գործընկերության գագաթաժողովի շրջանակներում և Բրյուսելում: Ինչպես միշտ նախագահ Սարգսյանի հետ լավ գրույց ունեցանք երկկողմ և տարածաշրջանին առնչվող օրակարգային հարցերի շուրջ:

Առանձնացնեմ հետևյալ երեք կետերը.

Առաջին. ԵՄ-Հայաստան հարաբերություններում ընդհանուր առաջընթաց կա: Առաջընթաց է գրանցվել Ասոցիացման համաձայնագրի շուրջ բանակցություններում: Մեկնարկել են բանակցությունները Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրի շուրջ: Ավելին, ս.թ.-ի փետրվարին մեկնարկեցին մուտքի արտոնագրերի դյուրացման և ռեադմիսիայի մասին համաձայնագրի բանակցությունները, որպես առաջին քայլ դեպի մուտքի արտոնագրերի ռեժիմի ազատականացում:

Նախագահ Սարգսյանին հորդորել էի հնարավորին չափով օգտվել Արևելյան գործընկերության շրջանակներում Հայաստանին տրամադրվող հնարավորություններից: Վարշավայի գագաթնաժողովից հետո արձանագվել զգալի առաջընթաց:

Ինչպես արդեն նշեցի, մենք աշխատում ենք ճանապարհային քարտեզում ներառված նպատակների իրականացման ուղղությամբ՝ 2013 թ.-ին Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության հերթական գագաթնաժողովին ընդառաջ:

Երկրորդ. Ողջունում եմ Հայաստանի հանձնառությունը իրականացնել բարեփոխումներ՝ հիմնված ԵՄ-ն հիմնարար արժեքների վրա՝ ԵՄ-ն չափանիշների և նորմերի մոտարկմամբ: Հայաստանի համար դա ակնհայտ ռազմավարական ընտրություն է:

Հայաստանին կոչ եմ անում շարունակել նույն ուղղությամբ, դեպի ժողովրդավարական հաստատությունների ամրապնդում, թափանցիկության խթանում, կոռուպցիայի արմատական վերացում,

մարդու իրավունքների պաշտպանություն ու օրենքի գերակայության ապահովում, ինչպես նաև խոսքի և մամուլի ազատություն:

Մեծարգո նախագահ,

Դուք ճիշտ ուղու վրա եք, չնայած դեռ շատ անելիքներ կան:

Թույլ տվեք կրկին նշել, այն ինչ արդեն ասել եմ պատգամավորների և քաղաքացիական հասարակության հետ հանդիպումների ժամանակ. Մենք պատրաստ ենք Ձեզ աջակցել: Որքան անշեղ լինի իրական բարեփոխումներ իրականացնելու և համամարդկային արժեքները պահպանելու Ձեր պատրաստակամությունը, այնքան շատ կարող եք ապավինել ԵՄ-ը՝ համաձայն «ավելին՝ ավելի դիմաց» սկզբունքի:

Այս կապակցությամբ ուրախ եմ հայտարարել, որ ԵՄ-ը որոշել է 2012 թվի համար 5 մլն. եվրոյով ավելացնել Հայաստանին տրամադրվող իր ամենամյա ֆինանսական աջակցությունը՝ Արևելյան գործընկերության ինտեգրման և համագործակցության ծրագրի ներքո: Այս գումարը 25%-ով ավելացնում է ԵՄ ֆինանսական աջակցության ծավալները: Ֆինանսավորումը ուղղվելու է Հայաստանի ասոցացման առաջընթացն ապահովող մի շարք արմատական բարեփոխումների իրականացմանը:

Եվրամիությունը ողջունում է ՀՀ իշխանությունների ջանքերը առավել մրցունակ և թափանցիկ խորհրդարանական ընտրությունների անցկացման ուղղությամբ: Սա կարևոր առաջընթաց էր: Միաժամանակ, համաձայն ԵԱՀԿ/ԺՀՄԻԿ դիտորդական առաքելության եզրափակիչ զեկույցի, դեռ կան լուծում պահանջող խնդիրներ: Վստահ ենք, որ այդ խնդիրներն իրենց լուծումը կգտնեն մինչև գալիք նախագահական ընտրությունները:

Այս կապակցությամբ, ուրախ եմ նշել, որ ներկայում Եվրոպական հանձնաժողովը սկսելու է Հայաստանի և միջազգային ֆինանսական հաստատությունների հետ դռներների համաժողովի նախապատրաստական աշխատանքները:

Երրորդ. Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման առաջընթացը պետք է շարունակի մնալ առաջնահերթություն: Քանի դեռ հակամարտության հարցը լուծված չէ, անցնող ամեն օրը վատնված հնարավորություն է բոլորիս համար: Լուծում գտնելու համար անհրաժեշտ է կառուցել վստահություն, հավատ և հարգանք:

Մեծ մտահոգությամբ ենք տեղեկանում Հայաստանի և Ադրբեջանի սահմանում և շփման գծում տեղի ունեցած զինված լուրջ միջադեպերի մասին: Խորապես ցավում ենք մարդկային կյանքի կորստի

կապակցությամբ: Իմ ցավակցությունն եմ հայտնում իրենց հարազատներին և սիրելիներին կորցրած ընտանիքներին:

Ռազմական ուժի կիրառումը չի լուծի հակամարտությունը: Միայն խաղաղ, բանակցությունների միջոցով ձեռք բերված հանգուցալուծումն է, որ հնարավորություն կտա ողջ տարածաշրջանին դուրս գալ ստեղծված իրավիճակից և շարժվել դեպի անվտանգ և բարեկեցիկ ապագա: Եթե հաջողվի ապահովել անվտանգ և կայուն միջավայր տարածաշրջանում, հայ ժողովուրդը կօգտվի կայունության ու խաղաղության պտուղներից:

Կրկնում եմ Հայաստանին և Ադրբեջանին ուղղված կոչը, որն ավելի վաղ ասվել է ԵՄ-ն և հայտարարվել է Մինսկի խմբի համանախագահների կողմից Մեծ քսանյակի գազաթափողովի ժամանակ. Երկու կողմերն էլ պետք է կայացնեն այնպիսի որոշումներ, որոնք կհանգեցնեն հակամարտության տևական և խաղաղ կարգավորման` հիմնված Մադրիդյան սկզբունքների վրա: Հայաստանն ու Ադրբեջանը պետք է լիարժեք կատարեն ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում երկու երկրների նախագահների ստանձնած հանձնառությունները: Երկու կողմերն էլ պետք է խստորեն պահպանեն զինադադարի պայմանները, ցուցաբերեն զսպվածություն և զերձ մնան ռազմատենչ հայտարարություններից:

ԵՄ-ն պատրաստ է օժանդակել վստահության զարգացմանն ու հաշտեցմանն ուղղված բոլոր ջանքերը: Մենք ունենք նման օժանդակություն տրամադրելու թե՛ միջոցներն ու թե՛ փորձը: Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ դեսպան Լեֆորի նշանակումը վկայում է ԵՄ-ն աճող հանձնառության մասին:

Պարո՛ն նախագահ,

Կրկին շնորհակալ եմ մեզ Երևանում հյուրընկալելու համար: Հայաստանը մեր գործընկերն է, մեր մոտ գործընկերը: Ուրախ եմ, որ այսօր վերահաստատեցինք մեր համատեղ անելիքները Հայաստանի դրական ապագան ապահովելու ուղղությամբ:

Շնորհակալություն